Հասցեատեր՝ *ՀՀ էկոնոմիկայի նախարարություն*

10-11-2025թ.

Դիմող՝ *ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԳՈՒՋՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0006, ՇԵՆԳԱՎԻԹ,*
ՄԱՆԹԱՇՅԱՆ Փ., 51, 6
ugujyanandranik@gmail.com : 37441446087

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ դիտարկել իմ թեկնածությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար՝ որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ։

Ես աշխատել եմ որպես FAO-ի (ՄԱԿ-ի Սննդի և գյուղատնտեսության կազմակերպության) Ազգային թվային գյուղատնտեսության մասնագետ (National Digital Agriculture Specialist)՝ համագործակցելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության տարբեր ստորաբաժանումների հետ՝ թվային գյուղատնտեսական լուծումների մշակման և տվյալահեն քաղաքականության զարգացման ուղղությամբ։

Ներկայումս աշխատում եմ որպես դատահամակարգչատեխնիկ փորձագետ, իրականացնելով թվային ապացույցների, ծրագրային ապահովման, ցանցային համակարգերի և տվյալային կրիչների փորձաքննություն։
Իմ աշխատանքը ներառում է թվային միջավայրում իրականացվող տեխնիկա-դատափորձագիտական վերլուծություն՝ նպատակ ունենալով վերականգնել, ուսումնասիրել և գնահատել համակարգչային տվյալները՝ անկախ դրանց վիճակից կամ ջնջված լինելու հանգամանքից։
Որպես դատահամակարգչատեխնիկ փորձագետ՝ իրականացնում եմ համակարգիչների, սերվերների, ցանցային ենթակառուցվածքների և տեսագրիչների տվյալների փորձաքննություն, վերլուծում եմ ծրագրային ապահովումների կառուցվածքը, ֆունկցիոնալությունն ու անվտանգության մակարդակը, կատարում եմ ջնջված կամ փոփոխված տեղեկատվության վերականգնում և թվային ապացույցների վավերացում։
Գնահատում եմ համակարգչային սարքավորումների տեխնիկական վիճակը, դրանց կիրառման նշանակությունն ու տեղեկատվական անվտանգության ռիսկերը, ինչպես նաև իրականացնում եմ բջջային հեռախոսների, պլանշետների և այլ թվային կրիչների փորձաքննություն՝ համաձայն միջազգային դատաֆորենսիկ չափանիշների՝ ISO/IEC 27037, ISO/IEC 27042, ENFSI Guidelines։

2025 թվականի ապրիլից ինտենսիվ համագործակցել եմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ Նարեկ Հովակիմյանի և ոլորտը համակարգող վարչությունների

հետ՝
ԷԱՏՄ ՏԿ 018/2011 տեխնիկական կանոնակարգով սահմանված էլեկտրական տրանսպորտային միջոցների էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման ուղղությամբ։
Այս համագործակցության արդյունքում ձևավորվել է նախարարությունների միջև աշխատանքային ձևաչափ, քննարկվել են տեխնիկական և իրավական լուծումներ, և արդեն արձանագրվել են զգալի արդյունքներ՝ այդ թվում էլեկտրոնային անձնագրերի գրանցման և գների վերահսկման ուղղությամբ։

Բացի այդ՝ որպես ClinChoice ընկերության AI/ML թիմի ղեկավար և Expert Factum ընկերության թվային փորձագետ, մշտապես ներգրավված եմ տեխնոլոգիական լուծումների, տվյալների կառավարման և նորարարական քաղաքականությունների մշակման գործընթացներում։ Իմ մասնագիտական փորձը ընդգրկում է պետական և մասնավոր հատվածների համագործակցություն, արհեստական բանականության, թվային ենթակառուցվածքների և տվյալների կառավարման ոլորտները։

Համոզված եմ, որ իմ փորձառությունը՝ պետական մարմինների հետ համագործակցության, թվային նորարարությունների, արհեստական բանականության և տվյալագիտության ոլորտներում, կարող է նպաստել խորհրդի արդյունավետ գործունեությանը՝ հատկապես այն խնդիրների ուղղությամբ, որոնք առնչվում են թվային տնտեսությանը, ինովացիաներին և գյուղատնտեսական տեխնոլոգիաների զարգացմանը։

Դիմող՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԳՈՒՋՅԱՆ